## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի
Հանրապետության Արմավիրի
մարզի Ջրարբի համայնք, ՀՀ, Արմավիրի
մարզ, գ. Ջրարբի ,

**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ**

N 148
*18 նոյեմբեր 2019թ.*

Հարգարժան պարոն Մաթևոսյան.

Ձեզ է ներկայացվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնքի ղեկավարի կողմից 2019թվականի հոկտեմբերի 2-ից մինչև 15-ը ընդունած որոշումները:

Առդիր 4 էջ:

**Համայնքի ղեկավար՝** **Ղազար Ղազարյան**

*Կատ. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Վ. Վարդանյան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ջրարբի, ,

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 27-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՀԵՍՏԸ, ՊԱՐԻՍՊԸ, ԾԱԾԿԸ ԵՎ ԶՈՒԳԱՐԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով <<Կարեն Մաչանյան>>ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից տրված չափագրությունը.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.ՀՀ Արմավիրի մարզի Ջրարբի համայնքի Ե. Չարենց փողոցի 7/2 հասցեում գտնվող սեփականության իրավունքով Ռաֆիկ Պապլարյանին պատկանող տանը կից ինքնակամ կառուցված 30.6 ք/մ տնտեսական պահեստը, 0.7 ք/մ պարիսպը, 5.3 ք/մ ծածկը և 2.7ք/մ զուգարանը և զբաղեցրած 0.0229 հա մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն՝ հողատարածքի գործառնական նշանակությունը համարել փոփոխված և համապատասխանեցնել հատակագծին՝ բնակավայրի բնակելի կառուցապատման: Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, նրա զբաղեցրած հողամասը չի ընդգրկվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք,

համապատասխանում է համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերին:

2. Օրինականացնել Ռաֆիկ Պապլարյանի կողմից Ջրարբի համայնքի Ե. Չարենց փողոցի 7/2 հասցեում գտնվող տանը կից ինքնակամ կառուցված 30.6ք/մ տնտեսական պահեստը, 0.7ք/մ պարիսպը, 5.3 ք/մ ծածկը և 2.7 զուգարանը ճանաչել օրինական ՝ տրամադրելով Ե. Չարենց փողոցի 7/2 հասցեն:

3. Նկատի ունենալով, որ թույլ է տրվել ինքնակամություն, ուստի ինքնակամ կառույցի օրինականացման, պետական գրանցման, այդ թվում՝ համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերն իրականացվում են ինքնակամ կառույցն իրականացնողի միջոցներով:

4. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**Համայնքի ղեկավար՝** ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ

20 19թ. հոկտեմբեր 02
գ.Ջրարբի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ջրարբի, ,

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 28-Ա

## ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 12-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով ավագանու 2006թվականի օգոստոսի 18-ի N 01 որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնքի 04-086-011-042 ծածկագիրը կրող անշարժ գույքին տրամադրել՝ Հայաստանի Հանրապետության, Արմավիրի մարզ, Ջրարբի համայնք, Ս Խաչատրյան փողոց 10-րդ շենքի 2-րդ բնակելի տուն հասցեն:

2.Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանման կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**Համայնքի ղեկավար՝** **ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ**

20 19 թ. հոկտեմբեր 14
գ.Ջրարբի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ջրարբի, ,

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 29-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.02 ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ և 3-րդ մասով ու 67-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնքի ավագանու 2019թվականի հոկտեմբերի 14-ի N 52-Ա որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնքի սեփականություն հանդիսացող 0.02հա բնակավայրի բնակելի կառուցապատման հողատեսքը օտարել աճուրդային կարգով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Համայնքի ղեկավար՝** ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ

20 19 թ. հոկտեմբեր 15
գ.Ջրարբի